

# ԼԱՌԻՐԱ ԱՍԱՏՐՅԱՆ ՉԱՐՈՒՀԻ ԱՍԱՏՐՅԱՆ

## ԱՌԱՔԵԼ ՍՅՈՒՆԵՑՈՒ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

Հոդվածում դիտարկված են Տաթևի համալսարանի սան Առաքել Սյունեցու դեռևս չուսումնասիրված մանկավարժական ժառանգության մեջ գերակայող սովորողների ճանաչողական գործունեության կազմակերպման, դրա արդյունավետության վրա ազդող գործոնների և պատճառների, նրանց կողմից գիտելիքների ձեռքբերման, ուսուցման գործընթացի գործիքավորման, անձի կատարելիության և բարոյական դաստիարակության հարցերը:

**Բանալի բառեր`** Առաքել Սյունեցի, փիլիսոփայական միտք, մանկավարժական միտք, տաթևյան դպրոց, գիտելիք, առաջադեմ, դիդակտիկական հարցեր, իմացական ընդունակություններ, զգայական փորձ, վերարտադրել, հիշողություն, արվեստ, գործնական փիլիսոփայություն, սովորել, աշակերտ:

Առաքել Սյունեցին տաթևյան դպրոցի ականավոր ներկայացուցիչներից մեկն է: Նրա կենսագրական տվյալները շատ սուղ են, սակայն նրա թողած գրական, փիլիսոփայական ժառանգությունը բավական է, որ Առաքել Սյունեցուն դասենք միջնադարյան հայ փիլիսոփայական, գրական, քերականագիտական, մանկավարժական, երաժշտական մտքի առաջադեմ ներկայացուցիչների շարքին:

Մանուկ Աբեղյանի վկայությամբ` Առաքել Սյունեցին եղել է Տաթևի համալսարանի սան` Գրիգոր Տաթևացու աշակերտը և նրա քեռորդին [Էջ 368]:

Տաթևի համալսարանում ուսումնառող ավարտելուց հետո նա զբաղվում է գրական-մանկավարժական և վարդապետական գործունեությամբ: 1409 թվականին նա նշանակվում է Տաթևի վանքի եպիսկոպոս, ապա արքեպիսկոպոս առաջնորդ` «Սիւնեաց վերադիտող»:

Գրիգոր Տաթևացին իր «Գիրք քարոզութեան», Ամարան հատորում գովեստով է խոսում Առաքել Սյունեցու մասին.

Նախ քեռորդոյն իմոյ ըստ մարմնի,  
Ծնընդամիտ երգաբանի,  
Առաքելոյ առաքինի,  
Եւ Սիւնական գլխոյ արհի [Էջ 721]:

Կան տվյալներ, որ Մաթեոս Ջուղայեցուց հետո նա եղել է Տաթևի համալսարանի ռեկտորը: Այսինքն` բացի հոգևորական առաջնորդի իր պարտականություններից և գրական-ստեղծագործական գործունեությունից` նա զբաղվել է նաև մանկավարժական գործունեությամբ:

Նրա մանկավարժական հայացքներն իրենց արտացոլումն են գտել «Մեկ-

նութիւն կամ համառօտ լուծմունք Սահմանաց՝ գրոցն Դաւիթ Անհաղթի», «Քերականութեան մեկնութիւն» կամ «Քերականութեան լուծումն» աշխատություններում:

Իհարկէ, նրա գրական ստեղծագործությունների գլուխգործոցը «Դրախտագիրք»-ն է, որը համեմատվում է Դանթե Ալիգերիի «Աստվածային կատակերգություն» ստեղծագործության հետ:

Մենք այդ ժամանակի համար կարևոր ձեռքբերում ենք համարում, հատկապես Առաքել Սյունեցու մանկավարժական հայացքները, որոնցում, ըստ էության, գերակայում են ուսուցման գործընթացի իրականացման սկզբունքների, սովորողների կողմից գիտելիքների ձեռք բերման, ճանաչողական գործունեության կազմակերպման դիդակտիկական հարցերը, ազգային ավանդույթների պահպանման՝ որպես անձի բարոյական դաստիարակության միջոցի դիտարկումները, ուսուցչին և աշակերտին ներկայացվող պահանջները, որոնք այդ ժամանակաշրջանի համար բավականին առաջադեմ էին: Նա իրերի, երևույթների իմացության կարևոր միջոց է համարել զգայական փորձը, զբաղվել է նաև քերականության, արվեստի ուսուցման, անձի ստեղծագործական ընդունակությունների և կարողությունների զարգացման հարցերով:

Նա իր «Քերականութեան մեկնութիւն» աշխատության մեջ, որը շարադրված է հարց ու պատասխանի ձևով, որպեսզի քերականության ուսուցումը մատչելի լինի և հեշտ յուրացվի, անդրադարձել է նաև սովորողների բանավոր և գրավոր խոսքի զարգացման հարցերին՝ որպես ազգային ինքնագիտակցության ձևավորման միջոց: Ընդ որում՝ նա շեշտում էր գիտելիքների երկվիության գաղափարը, ըստ որի՝ գիտելիքները լինում են բանական և զգայական, և դրանց ձեռքբերման, ինչպես նաև ընթերցողական կարողությունների ձևավորման գործում մեծ տեղ էր հատկացնում ընթերցանությանը [Էջ 545]:

Իհարկէ, նրա դիդակտիկական հայացքները առավել ընդհանրացված կերպով արտացոլված են «Մեկնութիւն կամ համառօտ լուծմունք Սահմանաց՝ գրոցն Դաւթի Անհաղթի» աշխատության մեջ, որտեղ նա անդրադարձել է ուսուցման և սովորողների կողմից գիտելիքների ձեռք բերման եղանակներին ու ձևերին, նրանց ճանաչողական-իմացական գործունեության արդյունավետության ապահովման մանկավարժական պայմաններին: Իր ժամանակի համար նորը, առաջադիմական այն էր, որ Առաքել Սյունեցին տարբերակում է «իմացական ընդունակություններ», «ընկալման ընդունակություններ», «վերարտադրման ընդունակություններ», «արտաբերման ընդունակություններ», «ստեղծագործական ընդունակություններ» հասկացությունները՝ դրանք համարելով կարևոր նախադրյալներ կրթական գործի կազմակերպման, սովորողների ուսումնական և ստեղծագործական կարողությունների զարգացման, գիտելիքների յուրացման համար:

Ըստ նրա՝ իմաստուն մարդը միշտ ղեկավարվում է բանականությամբ և ձգտում է թափանցել իմաստության խորքերը..., իսկ հիմար մարդը, քանի որ չունի գիտելիքների ներքին դասավորվածություն, դատարկախոսում է անիմաստ և անօգուտ [Էջ 288]:

Նա բարձրացնում է ուսուցման գործընթացում կարևոր դեր կատարող հոգեկան երկու՝ իմացության և ընկալման գործընթացների նշանակալիության

հարցը և հիմնավորում, որ մարդը գիտելիքը ձեռք է բերում՝ անցնելով չիմացությունից իմացության, իմացությունից ընկալման, ընկալումից՝ հասկացման և վերարտադրության փուլերով՝ շնորհիվ ուսուցչի ջանքերի և իր աշխատասիրության: Նա տարբերակում է գիտելիքների երկու տեսակ՝ գիտելիքներ, որոնք մոռացվում են, և գիտելիքներ, որոնք չեն մոռացվում և հնարավորություն են տալիս մարդուն դրանց համապատասխան գործունեություն ծավալել, տիրապետել արվեստին: Ընդ որում՝ կարևորելով ուսուցման առարկայի առաջնային դերը՝ նա նշում է. «մի բան է ուսուցումը, մի այլ բան է ուսուցման առարկան, այսինքն՝ մտավոր ընդունակությունը հանդես է գալիս ենթակայի դերում, իսկ գիտելիքները՝ ստորոգյալի, և դա վերաբերում է ինչպես արվեստի, այնպես էլ բոլոր տեսակի գիտելիքներին» [Էջ 544]:

Փաստորեն դեռևս 15-րդ դարում Առաքել Սյունեցին տվել է գիտելիքների յուրացման փուլերը, և այդ գործընթացի գլխավոր սուբյեկտներ է համարել ուսուցչին ու աշակերտին՝ դրանում կարևորելով ուսուցման բովանդակությունը, սովորողների հակումները, բնածին նախադրյալները, նրանց ընկալման, հիշողության, վերարտադրման, լեզվական և շարժողական ապարատների գործունեության, ուսուցման գործընթացի գործիքավորման, դրա արդյունքի, ստեղծագործության և դրանից բավարարվածության հարցերը [Էջ 554]: Նա նշում էր. «գոյություն ունի գիտության և ընթերցանության հետ զգայական հաղորդակցման յոթ գործիք և յոթը՝ բանականին՝ երեքը գորղին և երեքը կարդացողին և մեկ միջնորդ՝ թուղթը » [Էջ 167]:

Առաքել Սյունեցու գիտական հետաքրքրությունների շրջանակը լայն ու բազմաբովանդակ է եղել: Նա ոչ միայն անդրադարձել է ուսուցման հարցերին, այլև սովորողների ստեղծագործական ընդունակությունների և կարողությունների զարգացման վրա ազդող գործոններին, օրինակ՝ դիտարկելով արվեստին լիարժեք տիրապետելու, ստեղծագործական ընդունակությունները զարգացնելու հարցը՝ նա նշում է. «Արվեստին լիարժեք տիրապետելու համար անհրաժեշտ է մի շարք գործոնների առկայություն, հատկապես առաջին՝ սովորեցնող (արվեստը), երկրորդ՝ սովորող, երրորդ՝ գիտելիքներ, որոնք առկա են սովորողի գիտակցության մեջ, չորրորդ՝ վերարտադրությունը այն բանի, ինչ սովորոցնում են, հինգերորդ՝ հիշողություն, որի շնորհիվ պահպանվում են ձեռք բերած գիտելիքները, վեցերորդ՝ ներգործությունը արվեստի առարկայի վրա, յոթերորդ՝ մարմնի մասերը, այսինքն՝ ձեռքերն ու ոտքերը, որոնց միջոցով իրականացվում է գործողությունը, ութերորդ՝ համապատասխան գործողությունը, իներորդ՝ վերաբերյալը, տասերորդ՝ ստեղծված արվեստի գործը, տասնմեկերորդ՝ արվեստի գործը ընկալողը և նրանով հիացողը» [Էջ 554]:

Առաքել Սյունեցին փիլիսոփայության և ընդհանրապես բարոյականության տեսանկյունից քննարկել է մարդու կատարելության հարցը, որին, ըստ նրա, կարելի է հասնել ուսուցման գործընթացում բարոյական որոշակի որակների ձևավորման շնորհիվ:

Առաքել Սյունեցու տեսադաշտից՝ որպես հմուտ մանկավարժի, դուրս չեն մնացել երաժշտության տեսության, դրա ուսուցման, ուսուցիչի և աշակերտի՝ որպես ուսուցման սուբյեկտ-օբյեկտի փոխհարաբերության հարցերը: Այս համաբնագրում նա անդրադարձել է աշակերտի հանդեպ ուսուցչի պարտականություններին ու պարտավորություններին:

Այդ տեսանկյունից հետաքրքրության է արժանի նրա կողմից աշակերտի ուսումնական գործունեության և ուսուցչի ուսուցանող գործունեության արդյունավետության և ոչ արդյունավետության պատճառների վեր հանումն ու բնութագրումը: Նա առանձնացրել է աշակերտի ուսումնական գործունեության մեջ չառաջադիմելու հետևյալ տասներեք պատճառները.

Առաջին՝ եթե սովորողը չի կտրվել աշխարհիկ հաճույքներից, ապա նա չի կարող իրեն նվիրել ուսմանը:

Երկրորդ՝ եթե ինչ-որ մեկը նույնիսկ կտրվել է աշխարհից, բայց չի կտրվել մեղսալից մտքերից, որոնք տանում են նրան մեղսագործության ճանապարհով, ապա նա չի կարող հասնել դատողությունների փայլատակման:

Երրորդ՝ չնայած սովորողը ունի անբասիր բանականություն, բայց դրա հետ միառժամանակ ծուլ է ու անփույթ է, ամեն դեպքում նա չի կարող սովորել:

Չորրորդ՝ եթե նա համարվում է ամբարտավան և անհնազանդ և չի ուզում հաղորդակցվել մյուսների (աշակերտների) հետ, ու դրսևորվել իրեն այդ միջավայրում, նա չի կարող սովորել:

Հինգերորդ՝ եթե առարկայի բարդությունների ի հայտ բերման ժամանակ աշակերտը տատանվում է, ապա նա չի կարող շարունակել ուսումը:

Վեցերորդ՝ եթե նա պարապմունքների ժամանակ չի կարողանում իմի բերել մտքերը, և ցրված ու դատողություններ կատարելու ունակությունից զրկված այս ու այն կողմ է ընկնում, ապա նա չի կարող սովորել:

Յոթերորդ՝ ով որ քնում կամ մրափում է դասախոսությունների ժամանակ նա ի վիճակի չէ սովորելու և մշտապես կմնա անգետ:

Ութերորդ՝ ով իմացական ընդունակություններից զուրկ է, որպեսզի հասկանա ասածը և որսա նրա իմաստը, նա զրկված է սովորելու հնարավորությունից:

Իներորդ՝ և չնայած սովորողը հասկանում է իմաստը, բայց չի կարողանում մտովի վերարտադրել, ապա նա չի կարող սովորել:

Տասներորդ՝ եթե սովորողը վերարտադրելու ընդունակություն ունի, բայց չունի հիշողություն, որը պահպանում է մտքերի կապն ու դասավորվածությունը, նա չի կարող սովորել իր մոռացկոտության պատճառով:

Տասնմեկերորդ՝ եթե սովորողը ունի հիշողություն, բայց չունի արտաբերման (արտիկուլյացիայի) ընդունակություններ, որպեսզի համարժեք արտահայտի սովորածը, ապա նրա սովորածը ոչ լիարժեք է և սահմանափակ, որով հետև նա չի տիրապետում մտքերի արտահայտման գործիքին:

Տասներկուերորդ՝ եթե ունի արտաբերման ունակություն, բայց չգիտի դատողության առանձնահատկությունները և տարբերիչ գծերը, ապա նա ի վիճակի չէ մաթեմատիկական առարկաներն ուսումնասիրել:

Տասներեքերորդ՝ եթե ինչ-որ մեկը տիրապետում է փիլիսոփայության տեսական գիտելիքների, բայց չի տիրապետում գործնական փիլիսոփայությանը, ապա նա ամեն ինչից հեռու կմնա [Էջ 558-560]:

Այսպիսով՝ ինչպես Գրիգոր Տաթևացին անգլիացի փիլիսոփա, հոգեբան, մանկավարժ Ջոն Լոկից երեք դար առաջ տվեց անգիր պնակիտի կամ լվացած մագաղաթի տեսությունը, այնպես էլ Առաքել Սյունեցին չէի մանկավարժ Յան Ամոս Կոմենսկուց, գերմանացի մանկավարժներ Իոհան Հերբարտից և

Ադոլֆ Դիստերվեգի շատ դարեր առաջ առաջադրել է աշակերտին, ուսուցչին, ուսումնա գործընթացի կազմակերպմանը ներկայացվող պահանջները, սովորողների իմացության, գիտելիքների յուրացման փուլերը, ինչպես նաև այդ գործընթացների իրականացման գործիքակազմը, դրանց ներկայացվող մանկավարժական պահանջները:

Սրանք պատմական փաստեր են, որոնք խոսում է միջնադարում Առաքել Սյունեցու փիլիսոփայական, գրական, քերականական, մանկավարժական, հոգեբանական մտքի թռիչքի և, ընդհանրապես, Սյունիքում հայ դպրության և մանկավարժական մտքի զարգացման բարձր մակարդակի մասին:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբեդյան Մ. Հայոց հին գրականության պատմություն, 2-րդ հատ., Երևան, 1946:
2. Առաքել Սյունեցի, «Մենութիւն կամ համառոտ լուծմունք Սահմանաց՝ գրոցն Դավիթ Անհաղթի»:
3. Առաքել Սյունեցի, «Մեկնութիւն քերականութեան»:
4. Գրիգոր Տաթևացի, «Գիրք քարոզութեան», «Ամարան» հատոր:

**ПЕДАГОГИЧЕСКИЕ ВЗГЛЯДЫ АРАКЕЛА СЮНЕЦИ - ЛАУРА АСАТРЯН, ЗАРУИ АСАТРЯН** - В статье рассматривается еще не изученная педагогическая наследия ученого 15-ого века Татевского университета Аракеля Сюнеци, в которой первоначальным считается организация познавательной деятельности учащихся, факторы и причины, влияющих на эффективность приобретения знаний, личностных характеристик и нравственной воспитании.

**Ключевые слова:** Аракел Сюнеци, философская мысль, педагогическая мысль, Татевская школа, знания, передавой, дидактические вопросы, познавательные способности, чувственный опыт, воспроизводить, память, искусство, практическая философия, учеба, ученик.

**PEDAGOGICAL VIEWS ARAKEL SYUNETSI - LAURA ASATRYAN, ZARUHI ASATRYAN** - The article discusses the following issues presented in the pedagogical legacy of Arakel Syunetsi, alumnus of Tatev University, which haven't been studied yet; organization of the cognitive activity of the learners, the factors and reasons influencing its defectiveness, the process of gaining knowledge, organizing the teaching process, achieving personal perfection and issues of moral education.

**Key words:** Arakel Syunetsi, Philosophical mind, pedagogical mind, Tatev School, knowledge, progressive, didactic issues, cognitive abilities, sensual experience, to reproduce, memory, art, practical philosophy, to study, pupil.